

ԺԹ.00.03 - ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ

**Սոցիալական հոգեբանության ուսումնասիրության առարկան և համակարգը:
Սոցիալական հոգեբանության զարգացման համառոտ պատմական ակնարկ**

- ***Սոցիալական հոգեբանության առարկան, դրա տեղը հոգեբանական գիտության համակարգում***

Սոցիալ-հոգեբանական գիտելիքների սահմանային բնույթը: Սոցիալական հոգեբանությունը որպես սոցիալական խմբերում մարդկանց վարքի և գործունեության օրինաչափություններն ուսումնասիրող գիտակարգ: Սոցիալական հոգեբանության հիմնական հասկացությունները: Սոցիալ-հոգեբանական երևույթների առաջացման և զարգացման մեխանիզմները: Սոցիալ-հոգեբանական երևույթների հիերարխիան և հարաբերակցությունը: Հասարակական գիտակցություն և հասարակական հոգեբանություն: Սոցիալական հոգեբանության առարկայի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները:

- ***Սոցիալական հոգեբանության կառուցվածքը և նշանակությունը, նրա ժամանակակից բնագավառները***

Սոցիալական հոգեբանության հիմնական բաղադրամասերը և մասնավոր տեսությունները: Սոցիալական հոգեբանության ժամանակակից տեսական և կիրառական բնագավառները: Սոցիալական հոգեբանության կողմից լուծվող խնդիրները, դրա դերը անձի ձևավորման, միջանձնային և միջխմբային հարաբերությունների կարգավորման, հիմնարկ-ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում աշխատանքի արդյունավետության և որակի բարձրացման գործում:

- ***Սոցիալ-հոգեբանական մտքի պատմական զարգացումը***

Սոցիալ-հոգեբանական գաղափարների զարգացումը սոցիալ-փիլիսոփայական և սոցիոլոգիական ուսումնասիրություններում: Սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները 19-րդ դարի պատմաէվոլուցիոն սոցիոլոգիայում:

Սոցիալական հոգեբանության որպես հոգեբանական գիտության բնագավառի ձևավորման փուլերը: Սոցիալ-հոգեբանական տեսությունների ստեղծման առաջին փորձերը (Ա.Լազարուս, Գ.Շտենդալ, Վ.Վունդտ, Գ.Տարդ, Ս.Սիգելե, Գ.Լեբոն): Սոցիալական հոգեբանության փորձարարական շրջանի զարգացումը 20-րդ դարում արևմուտքում: Սոցիալական հոգեբանության զարգացումը Ռուսաստանում և ԽՍՀՄ-ում: Սոցիալական հոգեբանության զարգացման հիմնական գիտական ուղղությունները:

- **Սոցիալական հոգեբանության տեղը գիտությունների համակարգում**

Սոցիալական հոգեբանության կապն ընդհանուր, տարիքային և մանկավարժական, բժշկական, ինժեներական, իրավաբանական և քաղաքական հոգեբանության, ինչպես նաև սոցիոլոգիայի, մանկավարժության, փիլիսոփայության, ազգագրության և բարոյագիտության հետ:

- **Սոցիալական հոգեբանության մեթոդաբանությունն ու մեթոդները**

«Մեթոդաբանություն» հասկացությունը սոցիալական հոգեբանության մեջ: Սոցիալական հոգեբանության ընդհանուր, հատուկ և մասնավոր մեթոդաբանությունը: Մասնավոր մեթոդաբանության հիմնական և լրացուցիչ մեթոդները: Սոցիալական հոգեբանության մեջ գիտական հետազոտությանը վերաբերող հիմնական պահանջները: Էմպիրիկ նյութի և տեսության հարաբերակցության խնդիրը: Էմպիրիկ տվյալների առանձնահատկությունը սոցիալական հոգեբանության ուսումնասիրություններում: Սոցիալ-հոգեբանական տեղեկատվության որակի խնդիրը: Սոցիալ-հոգեբանական հետազոտության երկու հիմնական տեսակները: Փորձարարական և կոռելյացիոն վերլուծություն: Տվյալների հուսալիության և հիմնավորվածության վերաբերյալ հարցի լուծման առանձնահատկությունը: Ռեպրեզենտատիվության խնդիրը:

Հետազոտության մեթոդաբանության և մեթոդիկայի հարաբերակցությունը: Սոցիալ-հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները. դիտում, փաստաթղթերի ուսումնասիրություն կոնտենտ վերլուծություն, հարցման տարբեր տեսակներ, թեստեր և գիտափորձ: Սոցիալ-հոգեբանական հետազոտության մեջ ուղղակի և անուղղակի

մեթոդների հարաբերակցության խնդիրը: Թեստերի կիրառման պայմանները սոցիալ հոգեբանության մեջ, նրանց օգտագործման մեթոդաբանական նորմերի հանգամանալից մշակման անհրաժեշտությունը: Գիտափորձի առանձնահատկությունը սոցիալական հոգեբանության մեջ: Գիտափորձի հիմնական տեսակները: Լաբորատոր գիտափորձի սահմանափակ հնարավորությունները: Գիտափորձի կիրառման բանավեճային խնդիրները:

Էմպիրիկ նյութերի մշակման մեթոդները (հարաբերակցական, գործոնային վերլուծություն և այլն): Սոցիալ-հոգեբանական ազդեցության մեթոդների հատուկ խումբ:

Տեխնիկական սարքերի կիրառումը սոցիալ-հոգեբանական հետազոտություններում: Կոնկրետ սոցիալ-հոգեբանական երևույթների ուսումնասիրության մեթոդիկաները: Սոցիոմետրիան և ռեֆերենտոմետրիան որպես սոցիալական հոգեբանության մեթոդներ: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների երկու հիմնական տիպերը՝ փորձարարական և համահարաբերակցական (կոռելյացիոն): Սոցիալ-հոգեբանական գիտափորձի առանձնահատկությունները, գիտափորձի հիմնական տիպերը: Փորձարարական նյութի մշակման մեթոդները (դիսպերսիա, համահարաբերակցություն, կլաստերային և գործոնային վերլուծություն և այլն):

• **Անձի սոցիալական հոգեբանություն**

«Անձ» հասկացությունը սոցիալական հոգեբանության մեջ: Անհատ, անձ, անհատականություն, գործունեության սուբյեկտ: Անձի սոցիալ-հոգեբանական կառուցվածքը: Կենսաբանականն ու սոցիալականը անձի կառուցվածքի մեջ: Հոգեկան գործընթացների օրինաչափությունների հաշվառումը միջանձնային փոխհարաբերություններում և մասնագիտական գործունեության ընթացքում: Աշխարհայացքային հիմքեր, արժեքային կողմնորոշումներ, դիրքորոշում, ուղղվածություն, անձի դրդապատճառային ոլորտ: Հոգեկանի ակտիվության մակարդակները: Անգիտակցականն անձի կառուցվածքում և մարդու մղումներում: Անձի ուսումնասիրության նպատակները սոցիալական հոգեբանության մեջ:

- **Անձի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները**

Անձի սոցիալական հոգեբանության դետերմինանտները: Բարձրագույն նյարդային համակարգի յուրահատկությունները, շրջապատող միջավայրը և հանրօգուտ աշխատանքը որպես անձի սոցիալ-հոգեբանական զարգացումը պայմանավորող հիմնական գործոններ: Անձի սոցիալ-հոգեբանական տիպերի դասակարգման հիմնական մոտեցումները: Անձի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրումը և նրա սոցիալական վարքի կանխատեսման հիմնահարցը. էքսպրեսիվ վարքի սոցիալական հոգեբանություն:

- **Անձի սոցիալ-հոգեբանական տեսությունների համառոտ բնութագիրը. անձնավորության սոցիալականացման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները**

Ա.Բոդայրովի սոցիալական ընկալման տեսությունը, Վ.Մյասիշչևի հարաբերությունների տեսությունը, Վ.Յադովի դիսպոզիցիաների տեսությունը և Դ. Ուզնաձեի դիրքորոշման տեսությունը: Անձնավորության ուսումնասիրության ակմեաբանական մոտեցումները: Ինտեգրալային անհատականության տեսությունը: Անձի հոգեվերլուծական տեսությունները: Զ. Ֆրեյդի, Կ.Յունգի և Ա.Ադլերի մոտեցումները անձի ուսումնասիրության հիմնախնդրին: Վարքաբանական մոտեցումներ: «Անձ» հասկացությունը արևելյան հոգեբանական և խոհափիլիսոփայական ուսմունքներում:

Անձնավորության սոցիալականացման փուլերը, ինստիտուտներն ու մեխանիզմները: Սոցիալականացման բովանդակությունը: Մարզինալ և կայուն սոցիալականացում: Սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունը անձի սոցիալականացման վրա: Է. Էրիքսոնի սոցիալական նույնականության տեսությունը, նույնականության բաղադրամասերը: Նույնականացման համամարդկային, խմբային և անհատական մակարդակները: Գաղափար անձի սոցիալական վարքի մասին: Սոցիալական դեր և վարքագիծ: Անձի սոցիալական վարքի շեղումները: Սոցիալականացում և ապասոցիալականացում: Անձի վերասոցիալականացման (ռեսոցիալիզացիայի) հոգեբանական պայմանները:

- **Անձի սոցիալ-հոգեբանական մտահասությունը**

Սոցիալ-հոգեբանական մտահասության ձևավորման հիմնական պայմանները, մտահասության ձևերը: Հաղորդակցական, պերցեպտիվ (ընկալման) և կենցաղային մտահասություն: Սոցիալ-հոգեբանական մտահասության բացահայտման գործոնները: Սոցիալ-հոգեբանական մտահասությունը որպես մասնագետի առաջատար որակ:

- **Սոցիալականացում**

Սոցիալականացման սոցիալ-հոգեբանական և սոցիոլոգիական ասպեկտները: Սոցիալականացման գործընթացի ուսումնասիրության հարցում սոցիալ-հոգեբանական մոտեցման տարանջատման անհրաժեշտությունը: Այդ գործընթացի կապը տարիքային հոգեբանության մեջ սոցիալականացման ուսումնասիրությունների հետ:

Սոցիալականացում հասկացությունը: Սոցիալականացման բնույթի վերաբերյալ հարցերի լուծման կախվածությունն առավել լայն մեթոդաբանական հարցերի լուծումներից. անձի և հասարակության հարաբերակցություն, անձի ակտիվություն և այլն: Սոցիալականացման գործընթացի բովանդակությունը գործունեության, շփման, ինքնագիտակցության ոլորտներում:

Անհատի սոցիալականացման հիմնական փուլերը: Սոցիալականացման հիմնական փուլերի որոշակիացման խնդրի տարբեր մոտեցումները (Է.Էրիքսոնի հայեցակարգը):

Սոցիալականացման ինստիտուտները: Մեխանիզմների և ինստիտուտների կախվածությունը հասարակական հարաբերությունների բնույթից: Անձի սոցիալական վարքի սոցիալականացումը և բնորոշումը:

- **Անձը խմբում**

Սոցիալական հոգեբանության մեջ անձի հիմնախնդիրը, անձի դիրքը խմբում, հաղորդակցական, փոխներգործուն և պերցեպտիվ ներգործությունների համակարգում: Անձի սոցիալական համապատասխանության հիմնախնդիրը: Սոցիալ-հոգեբանական վերլուծության մեջ դիֆերենցիալ հոգեբանության տվյալների ընդգրկման հեռանկարը: Անձի սոցիալ-հոգեբանական հատկանիշները (արտահայտված համատեղ գործունեության և շփման մեջ): «Անձի սոցիալ-

հոգեբանական համապատասխանություն» հասկացությունը և նրա բովանդակությունը: Անձի կոմունիկատիվ առանձնահատկությունը: Անձի իմացական բարդության և նրա «կոգնիտիվ ոճի» հիմնախնդիրը: Պերցեպտիվ պաշտպանության մեխանիզմները:

Անձի իմպլիցիտ տեսությունները: Անձի գործունեության արդյունավետությունը: Անձի սոցիալ-հոգեբանական հատկանիշների տեղը և դերը խմբում միջանձնային հարաբերությունների համակարգի բարելավման մեջ:

Սոցիալ-հոգեբանական թրեյնինգը որպես անձի սոցիալ-հոգեբանական բնութագրման զարգացման միջոց (Լ. Ա. Պետրովսկայա): Սոցիալ-հոգեբանական թրեյնինգի հնարավորությունները և սահմանափակումները: Անձի սոցիալ-հոգեբանական բնութագրության կատարելագործման գործնական նշանակությունը: Անձի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների հեռանկարները:

- **Շփման և հասարակական հարաբերությունների հոգեբանություն, շփման և հասարակական հարաբերությունների կառուցվածքը**

Հասարակական հարաբերությունների տեսակները, դրանց կապը շփման հետ: Հասարակական հարաբերությունների դասակարգման հիմքերը: Հասարակական հարաբերությունների տեսակները. արտադրական, տնտեսական, իրավական, բարոյական, քաղաքական, կրոնական, էթնիկական և գեղագիտական հարաբերություններ: Միջանձնային և միջխմբային հարաբերություններ: Միջանձնային փոխհարաբերությունների ընտրողականությունը և խորությունը: Միջխմբային փոխհարաբերությունների բնութագիրը:

- **Շփում, շփման տեսակները**

Շփման կառուցվածքը: Շփման հաղորդակցական-տեղեկատվական, ճանաչողական և ինտերակտիվ բաղադրամասերը: Շփման խոսքային և ոչ խոսքային տեսակները: Ոչ խոսքային շփման ձևերը, տեսողական (ասպեկտները): Ատրակցիան (միջանձնային գրավչությունը) որպես շփման կարևոր կողմ: Շփման գործառույթներն ու բարդությունները: Շփման դժվարությունների առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Տեղեկատվական, կարգավորիչ և աֆեկտիվ բարդություններ: Խմբի մեջ

ներգրավվելու դժվարություններ: Փոխհարաբերությունների զարգացման դժվարություններ: Խմբային գործունեության չձևավորվածության դժվարություններ: Հոգեբանական անհամատեղելիությամբ պայմանավորված դժվարությունները և անձի եսակենտրոն ուղղվածության հիմնախնդիրը: Եսակենտրոնության հուզական և վարքագծային կողմերը: Շփման արդյունավետության բարձրացման հոգեբանական միջոցները: Մասնագիտական շփման հոգեբանական բնութագիրը: Մասնագիտական շփման առանձնահատկությունները: Զրույցը մասնագիտական շփման գործընթացում, զրույցի վարման տեխնոլոգիան:

- **Սոցիալական ընկալում և հասարակական փոխըմբռնում**

«Սոցիալական պերցեպցիա» հասկացության նշանակության պատմական փոփոխությունը: Պերցեպտիվ գործընթացի վերլուծության առանձնահատկությունը սոցիալական հոգեբանության մեջ:

Սոցիալական ընկալման (պերցեպցիա) հիմնական գործառույթները: Սոցիալական ընկալման մեխանիզմները: Բ.Անանևի, Ա.Բոդայլովի, Բ.Լոմովի, Ե.Շորոխովայի սոցիալական ընկալման տեսությունը: Սոցիալական ստերեոտիպ, կարծրատիպացման գործընթացը: Նույնացում (իդենտիֆիկացիա), ապրումակցում (էմպաթիա) և միջանձնային գրավչություն (ատրակցիա): Խոհածություն (ռեֆլեքսիա): Կաուզալ ատրիբուցիա (պատճառական վերագրում): Հասարակական փոխըմբռնման դրսևորումները:

- **Սոցիալական ընկալման խաթարումները և դրանց հաղթահարման հոգեբանական ուղիները**

Միջանձնային ընկալման տեղը սոցիալ-պերցեպտիվ գործընթացների համակարգում: Միջանձնային ընկալման դերը շփման պրոցեսում: Շփվող գործընկերների փոխադարձ ընկալումը և ճանաչումը որպես նրանց միջև փոխըմբռնման հաստատման հիմք: Փոխըմբռնման ուսումնասիրման երկու հիմնական մոտեցում: Միջանձնային ընկալման մեխանիզմները (իդենտիֆիկացիա, ռեֆլեքսիա), էմպատիայի դերը այս գործընթացներում: Միջանձնային ընկալման երևույթները. «լուսապսակի», «առաջնայնության», «նորոյթի»: Կարծրատիպության գործընթացի բովանդակությունը

և նշանակությունը: Մարդու մասին առաջին տպավորության ձևավորման դիրքորոշման դերը: Ուրիշ մարդու վարքագծի պատճառի մեկնաբանությունը որպես «պատճառային վերագրում» երևույթը: Վերագրման գործընթացի կառուցվածքը: Վերագրման ձևերը և տեսակները (Գ.Կելլի): Միջանձնային վերագրման և ընկալման պրոցեսների հարաբերակցությունը:

Միջանձնային ընկալման հուզական կողմը որպես միջանձնային գրավչության երևույթ: Համակրանք, ընկերություն, սեր որպես գրավչության տարբեր մակարդակներ: Գրավչության ուսումնասիրման հիմնական ուղղությունները և դրանց գործնական նշանակությունը:

- **Միջանձնային ընկալման ճշգրտության հիմնախնդիրը:**

Սոցիալական հոգեբանությունում այդ խնդրի լուծման առանձնահատկությունը. չափանիշների բացակայությունն անձի ընկալվող և իրական գոյություն ունեցող հատկանիշների համեմատության համար: Անձնային թեստերի և փորձարարական գնահատականների սահմանափակ հնարավորությունները: Միջանձնային ընկալման ճշգրտության բարձրացման գործնական միջոցներ, սոցիալ-հոգեբանական թրեյնինգի համար հատուկ ծրագրերի օգտագործումը («հետադարձ կապ» ուսումնասիրումը և այլն):

Լաբորատոր պայմաններում շփման պերցեպտիվ կողմի վերլուծության սահմանափակությունը:

Իրական սոցիալական խմբերում համատեղ գործունեության բնութագրության ընդգրկման անհրաժեշտությունը ուսումնասիրությունների մեջ՝ որպես հաղորդակցման մեջ ուրիշին հասկանալու, ճանաչելու պրոցեսների բնութագրական գործոն:

- **Հանրությունների և սոցիալական ինստիտուտների հոգեբանություն**

Հանրությունների և սոցիալական ինստիտուտների սոցիալ-հոգեբանական բնութագիրը: Քաղաքացիական հասարակության և պետության բնորոշումները Հ.Հեգելի, Ի.Կանտի, Զ. Լոքի, Շ.Մոնթեսկյեի, Ժ. Ռուսոյի և այլոց աշխատություններում:

Քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնախնդիրը Ռուսաստանում: Հասարակական անվտանգության համակարգի խնդիրները: Հանրությունների և սոցիալական ինստիտուտների դասակարգումը: Ա.Պետրովսկու կոլեկտիվի սոցիոմետրիկ հիմնադրույթը: Սոցիալական ինստիտուտների տեսակները, դրանց դերը հասարակական վերահսկողության սահմանման գործընթացում: Սոցիալական ինստիտուտների գործառույթները: Հասարակական շարժունության ձևերը և հետևանքները:

- **Հասարակության շերտավորման սոցիալ-հոգեբանական բնութագիրը**

Հասարակական կազմակերպությունների մշակույթն ու մթնոլորտը: Կազմակերպչական մշակույթի հիմնական գործառույթները: Կազմակերպչական մշակույթի բաղադրամասերը: Հասարակական կազմակերպությունների սոցիալ-հոգեբանական մթնոլորտի համառոտ բնութագիրը: Սոցիալ-հոգեբանական մթնոլորտի տարրերը և նրա վրա ազդող գործոնները: Սոցիալ-հոգեբանական մթնոլորտի և աշխատանքային գործընթացի միջև կապի հոգեբանական յուրահատկությունները:

- **Մշակույթն ու կրթությունը որպես հասարակական ինստիտուտներ**

Մշակույթը որպես հասարակական ինստիտուտ: Մշակույթ հասկացությունը սոցիալական հոգեբանության մեջ: Մշակույթի տարրերը: Նյութական և հոգևոր մշակույթ: Մշակույթի զարգացման սոցիալ-հոգեբանական օրինաչափությունները: Կատարսիսի երևույթը արվեստի զարգացման մեջ: Կրթությունը որպես հասարակական ինստիտուտ: Կրթության հիմնական գործառույթները, մշակույթի տարածում, սոցիալականացում, ինկուլտուրացիա, սոցիալական ընտրասերում (սելեկցիա), հասարակության սոցիալական և մշակութային փոփոխում: Կրթական գործընթացի կազմակերպումը արտասահմանյան երկրներում:

- **Խմբերի սոցիալական հոգեբանությունը, խմբի խնդիրը սոցիալական հոգեբանությունում**

Հասարակության մեջ սոցիալական խմբերի տարբերակման օբյեկտիվ չափանիշների սոցիոլոգիան: Սոցիոլոգիական վերլուծության նշանակությունը սոցիալական

հոգեբանության մեջ խմբի խնդրի ձևակերպման համար: Սոցիալական հոգեբանության մեջ խմբի՝ որպես մարդկանց պարզ հանրույթի հասկացման քննադատությունը, օրինակ՝ լաբորատոր փորձերի պայմաններում: Սոցիալական հոգեբանություն և «խմբային հոգեբանություն»: Իրական սոցիալական խմբերի առանձնահատկությունների ուսումնասիրությունը անձի սոցիալական վարքի սահմանման համար՝ որպես սոցիալական հոգեբանության խնդիր: Գործունեության սկզբունքի մեթոդաբանական նշանակությունը սոցիալական հոգեբանության մեջ: Խումբը որպես գործունեության համակարգ և որպես գործունեության սուբյեկտ: Կոլեկտիվ սուբյեկտի գործունեության հոգեբանական բնութագրերը:

Խումբ և շրջանակ. շրջանակի հոգեբանական նախանշանը «մենք-զգացմունքի» առաջացումը: Խումբ և կազմակերպություն: «Խմբային գիտակցության» երևույթը: Իմացական ապարատը սոցիալական հոգեբանության մեջ խմբի կառուցվածքի բնութագրման համար: Խմբերի հիմնական բնութագրերը: Անձի դիրքը, կարգավիճակը և դերը խմբում: Խմբային արժեքները և նորմերը: «Հրամանների» հասկացությունը խմբում: Սոցիալական հոգեբանության մեջ ուսումնասիրվող խմբերի դասակարգումը:

• Սոցիալական մեծ խմբերի հոգեբանության ուսումնասիրության սկզբունքները, սոցիալական մեծ խմբերի հոգեբանության խնդիրը, դրանց դասակարգումը

Հասարակական հարաբերությունների համակարգում կարևոր տեղ զբաղեցնող մեծ խմբերի տեսակները (դասակարգեր, ազգեր, սոցիալական շերտեր, մասնագիտական խմբեր): Անհատի արժեքների եւ պահանջմունքների բովանդակային կողմերը հասկանալու համար այս խմբերի հոգեբանության ուսումնասիրության մեթոդաբանական նշանակությունը: Ժամանակավոր, անկազմակերպ խմբեր. ամբոխ, լսարան, հանդիսատես: «Զանգվածային վարք» հասկացության պատմական փոփոխությունը: Անկազմակերպ խմբերի հոգեբանության ուսումնասիրության նշանակությունը արդի փուլում: Սոցիալական մեծ խմբերի հոգեբանության կառուցվածքը: Սոցիալական մեծ խմբերի հոգեբանության ուսումնասիրության առանձնահատկությունները. գիտափորձի հնարավորությունների սահմանափակումը: Դիտման ինքնատիրապետություն, վիճակագրական ապարատի կիրառում,

վերլուծության մեթոդների ընդգրկում: Սոցիալական հոգեբանության սերտ կապը սոցիոլոգիայի հետ սոցիալական մեծ խմբերի հոգեբանության ուսումնասիրության հարցում: Մեծ խմբերի հոգեբանության վերլուծության մի քանի օրինակ:

- **Սոցիալական դասակարգերի հոգեբանությունը**

Տարբեր մշակույթներում հարցի մոտեցման առանձնահատկությունը: Դասակարգերի հոգեբանության ուսումնասիրության մարքսիստական մոտեցումը: Ամերիկյան եւ եվրոպական սոցիալական հոգեբանության դրույթները: «Անձի սոցիալական տիպ» հասկացությունը:

Դասակարգային հոգեբանության կառուցվածքը. դասակարգային պահանջմունքներ, դասակարգային հետաքրքրություններ: «Սոցիալական զգացմունքի» եւ «Սոցիալական բնավորության» խնդիրը: Տարբեր պատմական դարաշրջաններում տարրեր դասակարգերի «Հոգեբանական տրամադրվածության» առանձնահատկությունը:

Հասարակական զարգացման արդի փուլում տարբեր դասակարգային գիտակցության առանձնահատկությունները: Դասակարգերի հոգեբանության փոփոխությունների արտացոլումը նրանց ապրելակերպում:

- **Էթնիկական խմբերի հոգեբանության առանձնահատկությունները**

Սոցիալական հոգեբանության մեջ դրանց ուսումնասիրության ավանդույթները: Էթնիկական պատկանելիության գիտակցման կախվածությունը էթնիկական խմբերի գոյության սոցիալականացմական պայմաններից:

Ազգերի հոգեբանությունը: «Ազգային բնավորություն» եւ «Ազգի հոգեբանական նախադրյալ» հասկացությունները: Էթնոցենտրիզմի խնդիրը: «Էթնիկական ստերեոտիպ» հասկացությունը: Ազգային հոգեբանության հարաբերականությունն ու պատմականությունը: Ազգայինի և համամարդկայինի հարաբերակցության խնդիրների հոգեբանական բովանդակությունը:

Ազգի հոգեբանության ուսումնասիրության խնդիրները հասարակության զարգացման արդի պայմաններում:

- **Անկազմակերպ խմբեր և զանգվածային շարժումներ**

Անկազմակերպ խմբերի ընդհանուր բնութագրությունը և տեսակները. ամբոխ, զանգված, հանդիսատես:

Անկազմակերպ խմբերում հաղորդակցման և փոխներգործուն (ինտերակտիվ) գործնառնությունների առանձնահատկությունները: Ազդեցության միջոցները:

Հոգեբանական վարակը որպես ներգործության միջոց: Վարակի կախվածությունն անձի ինքնագիտակցության զարգացման մակարդակից: Վարակի դերի նվազեցման պատմական միտումը, որպես ներգործման միջոց: Վարակի երևույթը (ֆենոմենը) ժամանակակից հասարակություններում: Խուճապի երևույթը, նրա ուսումնասիրությունը սոցիալական հոգեբանության մեջ:

Ներշնչումը որպես նպատակաուղղված, չփաստարկված ներգործություն՝ հիմնված տեղեկատվության ոչ քննադատական ընկալման վրա: Սոցիալական ներշնչման նկարագրման իմացական ապարատը: Հականերշնչման երևույթը: Ներշնչման արդյունավետության պայմանները: Սոցիալական ներշնչման ուսումնասիրության կիրառական նշանակությունը: Ներշնչում եւ համոզմունք:

Նմանակում: Սոցիալական հոգեբանության պատմության մեջ նմանակման ուսումնասիրությունների ավանդույթները: Գ. Տարդի ներշնչման տեսության քննադատությունը: Նմանակման իրական դերը մարդկային հասարակության պատմական զարգացման մեջ և օնտոգենեզում:

Նմանակման, ներշնչման և վարակի հարաբերական նշանակությունը:

Սոցիալական շարժումները որպես զանգվածային վարքի առանձնահատուկ երևույթ: Անկազմակերպ եւ կազմակերպված խմբերի փոխգործողությունը սոցիալական շարժումներում:

- **Հասարակական կարծիքը որպես սոցիալական շարժումների հիմք**

Հասարակական կարծիքի ձևավորման մեխանիզմները: Ներգործման հոգեբանական միջոցների օգտագործման հնարավորությունը հասարակական կարծիքի ձևավորման

գործում: Հասարակական կարծիքի ուսումնասիրության սոցիալ-հոգեբանական մեթոդները: Հասարակական տրամադրության ձևավորման սոցիալ-հոգեբանական մեխանիզմների առանձնահատկությունը:

Հաղորդակցման զանգվածային միջոցների դերը հասարակական կարծիքի եւ հասարակական տրամադրության ձևավորման հարցում: Հասարակական կարծիքի վրա գիտակցական ներգործության գործոնների հարաբերակցությունը: Սոցիալական հոգեբանության մեջ «Սոցիալական անգիտակցության» խնդիրը: Սոցիալական շարժումներին մարդկանց համախմբման մեխանիզմները: Մեծամասնության և փոքրամասնության դիրքորոշումների հարաբերակցությունը: Լիդերի խնդիրը սոցիալական շարժումներում:

Սոցիալական շարժումների հոգեբանության ուսումնասիրությունների այժմեականությունն արդի պայմաններում:

- **Փոքր խմբերի ընդհանուր խնդիրները սոցիալական հոգեբանության մեջ**

Փոքր խմբերի նկատմամբ հերաքրքրության ուժեղացման պատճառները 20-րդ դարի հոգեբանության մեջ: Հասարակական կյանքում փոքրը խմբերի նշանակության մեծացման օբյեկտիվ պայմանները: Արեւմտյան սոցիալական հոգեբանության մեջ փոքր խմբերի ուսումնասիրության շեշտադրման փոփոխությունը՝ կապված ընդհանուր մեթոդաբանական դիրքորոշումների եւ սոցիալ-հոգեբանական գիտելիքների «Ճշգրտության» կողմնորոշման հետ:

Սոցիալական հոգեբանության մեջ փոքր խմբերի ուսումնասիրության պատմության հիմնական ուղղությունները: Փոքր խմբերի ուսումնասիրության սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական մոտեցումները: Փոքր խմբերի սոցիոլոգիական եւ սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների ավանդույթները արևմուտքում. սոցիոմետրիկ ուղղություն (Ջ. Մոռենո), սոցիոլոգիական ուղղություն (Է. Մեյո), «խմբային դինամիկայի» դպրոց (Կ.Լևին): Այս ուսումնասիրությունների մեթոդաբանական սկզբունքների քննադատությունը:

«Փոքր խումբ» հասկացությունը: Քննարկում փոքր խմբերի քանակական բնութագրությունների շուրջ: Փոքր խմբերի ստորին եւ վերին «սահմանները»: Փոքր խմբերի սահմանների հարցի լուծման կախվածությունը դրանց բնույթի մեկնաբանություններից:

Փոքր խմբերի դասակարգումը. առաջնային եւ երկրորդային խմբեր, ձևական եւ ոչ ձևական խմբեր, անդամության եւ ռեֆերենտ խմբեր:

- **Դինամիկ գործընթացները փոքր խմբերում**

Փոքր խմբերում դինամիկ գործընթացների ընդհանուր բնութագիրը: Խմբային դինամիկայի ուսումնասիրության կախվածությունն ուսումնասիրողի տեսական եւ մեթոդաբանական դիրքորոշումից: Խմբային դինամիկայի ուսումնասիրությունների նշանակությունը Կ.Լևինի դպրոցում:

Փոքր խմբերի ձեւավորման մեխանիզմները: Արտաքին խմբի հոգեբանական իրականության վերածման պայմանն անհատի համար:

- **Խմբային ճնշման երևույթը**

«Կոնֆորմիզմ», «Հարմարում» եւ «Ենթակայական վարք» հասկացությունների տարբեր մեկնաբանությունները: Ս.Աշի գիտափորձերի քննադատական վերլուծությունը լաբորատոր պայմաններում կոնֆորմիզմի ուսումնասիրության վերաբերյալ: Հարմարվողականության լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքների տեղափոխման անթույլատրելիությունը խմբային գործունեության՝ իրական պայմաններում անհատի վրա խմբային ճնշման երեւույթի ուսումնասիրության հարցում: Ենթակայական վարքի արդի ուսումնասիրությունները (Մ. Դոյչ, Գ.Ջերարդ):

Ենթակայական վարքի ուսումնասիրությունները հայրենական սոցիալական հոգեբանության մեջ (Ա.Վ.Պետրովսկի):

- **Խմբային համախմբվածություն**

Խմբային համախմբվածության ուսումնասիրությունների ավանդույթները սոցիալական հոգեբանության պատմության մեջ: Խմբային համախմբվածության սոցիոմետրիկ

ինդեքսները: Խմբային համախմբվածության ուսումնասիրությունների Լ.Ֆեստինգերի եւ Տ.Նյուկոմի մեթոդները: Համախմբվածության մասին պատկերացումների սահմանափակ լինելը՝ հիմնված խմբի հուզական գրավչության գաղափարի վրա:

Խմբային համախմբվածության ուսումնասիրության նորովի մոտեցում՝ հիմնված խմբային ակտիվության գործունային միջնորդավորվածության սկզբունքի վրա: Խմբի արժեքային կողմնորոշիչ միասնության հասկացությունը որպես խմբային համախմբվածության չափանիշ համատեղ գործունեության պայմաններում (Ա. Ի. Դոցով):

Խմբային համախմբվածության ուսումնասիրությունների մեթոդները նորովի մոտեցման շրջանակներում:

- **Ղեկավարությունը և լիդերությունը փոքր խմբերում**

«Լիդեր» եւ «ղեկավար», «լիդերություն» եւ «ղեկավարություն» հասկացությունների սահմանումների հարցը: Լիդերության ուսումնասիրության տեսական մոտեցումները սոցիալական հոգեբանության պատմության եւ արևմուտքի ժամանակակից սոցիալական հոգեբանության մեջ: Լիդերության «գիծ» տեսությունը և նրա կապը խարիզմատիկ հայեցակարգի հետ: Լիդերության «իրավիճակային» տեսությունը:

Լիդերության ոճի փորձարարական ուսումնասիրությունը Կ. Լևինի խմբային դինամիկայի դպրոցում:

Լիդերության ոճի բնութագրության տեղափոխման սահմանափակությունը ղեկավարության ոճի վրա: Լիդերության ուսումնասիրությունների իմացական ապարատի կատարելագործման անհրաժեշտությունը: Խմբի կողմից լիդերի ընդունման խնդիրը: Արժեքային փոխանակման հայեցակարգերը (Ռ.Լ. Կրիչևսկի):

Փոքր խմբերում լիդերների բացահայտման մեթոդիկան: Սոցիոմետրիկ մեթոդիկայի հնարավորությունները եւ սահմանափակումները: Լիդերների բացահայտման այլ մեթոդներ: Լիդերության ուսումնասիրության ապարատային մեթոդներ:

Լիդերության ոճը եւ խմբային գործունեության արդյունավետության խնդիրները: Ղեկավարության արդյունաբերության մոդել (Ֆ. Ֆիդլեր):

- **Խմբային որոշման ընդունում**

Խմբային կարծիքի ձեւավորման մեխանիզմի եւ խմբային որոշման ընդունման գործընթացի վրա ներգործող հիմնական ֆակտորները (գործոններ):

Խմբային որոշման ընդունման հարցում խմբային բանավեճի դերը: Խմբերի «բևեռացման» երևույթը: Անհատական եւ խմբային որոշումների որակի հարաբերակցության խնդիրը: «Ռիսկի տեղաշարժում» երևույթը և դրա դերը խմբային որոշումների բնույթի բացահայտման հարցում (Ջ. Ստոուներ):

Խմբի կողմից որոշումների ընդունման արդյունավետության բարձրացման մեթոդները. «ուղեղային գրոհ», «սինեկտիկա» եւ այլն:

Խմբային եւ անհատական որոշումների համեմատական արդյունավետությունը: Խմբային սխալ որոշումների գործոնները, «Խմբային ոգի» երևույթը (Ի. Ջանիս):

- **Փոքր խմբերի գործունեության արդյունավետությունը**

Արդյունավետության չափանիշների ընտրության խնդիրը: Միևնույն խմբի համար արդյունավետության վերջնարդյունքների բազմաքանակությունը:

Փոքր խմբերի տեսակները եւ նրանց արդյունավետության հիմնական չափանիշները: Խմբային գործունեության արդյունավետությունը եւ նրանում անդամակցելու բավարարվածությունը որպես խմբային գործունեության արդյունավետության երկու կարևոր կողմ: Խմբի զարգացման գործընթացում նրա արդյունավետության նոր չափանիշների առաջացումը: Նրա գործունեության արդյունավետության վրա ներգործող գործոնները: Խմբի անդամների հոգեբանական համատեղելիությունը, հաղորդակցման ուղիների եւ լիդերության ոճի նշանակությունը խմբի գործունեության արդյունավետության համար: Խմբի անդամների գործառույթների որոշ մասի փոխանցման խնդիրը որպես գործունեության արդյունավետության բարձրացման գործոն:

- **Խմբերի զարգացման սոցիալ-հոգեբանական ասպեկտները**

Խմբի զարգացման գաղափարի ձեւավորումը խմբային կյանքի դինամիկայի գաղափարների շարքում: Խմբի զարգացման վերլուծության հիմնական մոտեցումները: Սոցիալ-հոգեբանական թրեյնինգի ավանդույթները (Լ.Բենիսի եւ Գ.Շեպարդի տեսությունները): «Խմբի սոցիալականացման» ժամանակակից հայեցակարգերը (Ռ.Մոռլենդ, Ջ.Լիվայն): Խմբի զարգացման խնդիրը ինդիվիդուալիզմի եւ կոլեկտիվիզմի ուսումնասիրություններում:

Խմբի զարգացման խնդիրը կոլեկտիվի հոգեբանական տեսության մեջ հայրենական սոցիալական հոգեբանությունում (Լ.Ա.Պետրովսկայա): Կոլեկտիվի ուսումնասիրության հիմնական պատմական փուլերը խորհրդային գիտության մեջ: Ա.Ս.Մակարենկոյի գաղափարների նշանակությունը կոլեկտիվի սոցիալ-հոգեբանական տեսության մշակման համար:

Կոլեկտիվի սահմանումը: Կոլեկտիվի նշանները, նրա ուսումնասիրության սոցիալ-հոգեբանության ասպեկտը: Կոլեկտիվի զարգացման փուլերը եւ մակարդակները: Խմբային գործընթացների գործոնային միջնորդավորման գաղափարների կիրառումը կոլեկտիվի զարգացման մակարդակի որոշակիացման համար: Կոլեկտիվի զարգացման մակարդակի չափման մեթոդիկաները:

Կոլեկտիվի սոցիալ-հոգեբանական տեսության մեթոդաբանական նշանակությունը: Փոքր խմբի դինամիկ գործընթացների վերաիմաստավորման անհրաժեշտությունը նրա զարգացման տեսանկյունից:

Խմբերի նոր դասակարգման հնարավորությունը՝ կոլեկտիվի սոցիալ-հոգեբանական տեսության օգնությամբ: Կոլեկտիվի սոցիալ-հոգեբանական տեսության բանավեճային հիմնական հիմնահարցերը եւ նրա մշակման հետագա խնդիրները:

- **Միջխմբային հարաբերությունների հոգեբանություն**

Միջխմբային հարաբերությունների հոգեբանությունը որպես սոցիալական հոգեբանության հարաբերականորեն նոր ոլորտ (ճյուղ): Միջխմբային հարաբերությունների հոգեբանության ուսումնասիրությունների պատմությունը

սոցիալական հոգեբանության մեջ. Մ.Շերիֆի փոխներգործոնային մոտեցումը, Ա.Տերֆելի եւ Վ.Դուազի կոգնիտիվ (իմացական) տեսությունը:

Միջխմբային հարաբերությունների ուսումնասիրության հարցում սոցիալ-հոգեբանական եւ սոցիոլոգիական մոտեցումների տարբերակման անհրաժեշտությունը: Միջխմբային հարաբերությունների սոցիալ-պերցեպտիվ մեխանիզմների նկատմամբ գերակա հետաքրքրությունը որպես սոցիալ-հոգեբանական մոտեցման առանձնահատկության արտահայտում: Միջխմբային ընկալման հոգեբանություն (Վ. Ս. Ազեև):

Միջխմբային ընկալման խնդրի ուսումնասիրությունը խմբերի համատեղ գործունեության պայմաններում: Համատեղ գործունեության հաջողության և անհաջողության միավորների նշանակությունը միջխմբային ընկալման համար: «Միջխմբային ֆավորիտիզմի» երևույթը:

Միջխմբային հարաբերությունների վերլուծության նշանակությունը խմբի հոգեբանական բնութագրման հասկացման համար: Միջխմբային փոխգործողությունների ներգործությունը ներխմբային պրոցեսների վրա: Միջխմբային հարաբերությունների հոգեբանության ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները:

- **Ընտանիքի սոցիալական հոգեբանություն**

Ընտանիքի միջառարկայական ուսումնասիրությունները որպես ընտանիքի սոցիալական հոգեբանության տեսական հիմք: Ընտանիքի առանձնահատկությունը որպես փոքր խումբ: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական դասակարգումը և գործառույթները: Միամուսնական (մոնոգամ) և բազմակին (պոլիգամ) ընտանիքներ: Ընտանեկան հարաբերությունների համապատասխանությունը հասարակական նորմերին, ավանդական (պատրիարխալ), ժամանակակից (էգալիտար), կոլեկտիվիստական և ինդիվիդուալիստական ընտանիքներ: Ներընտանեկան հարաբերությունների դասակարգումը ըստ կենսակերպի կազմակերպման այլընտրանքային եղանակների: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական պրոբլեմները: Ամուսնության համատեղելիություն, հարմարվողականություն և համախմբվածություն:

Ընտանեկան թերապիայի էությունը, բովանդակությունը և գործընթացի կազմակերպման տարբեր մոտեցումներ:

Ամուսնալուծությունների հոգեբանական պատճառները: Ընտանիքի հոգեբանության բնագավառում կիրառական ուսումնասիրությունների էթիկական կողմը:

- **Մեծ սոցիալական խմբերի հոգեբանություն, մեծ սոցիալական խմբերի և հասարակական շարժումների սոցիալ-հոգեբանական բնութագիրը**

Մեծ խմբերի արտաքին հատկանիշները, զարգացում, սոցիալական նորմերի ընդհանրություն, սեփական դերային կառուցվածք: Դասակարգերը որպես սոցիալական խմբի տեսակներ: Դասակարգերի սոցիալ-հոգեբանական հատկանիշները: Հասարակական զարգացման փուլերը, մինչարդյունաբերական (մինչ ինդուստրիալ), արդյունաբերական (ինդուստրիալ) և հետարդյունաբերական (պոստինդուստրիալ) հասարակություն: Սոցիալական խմբերի քաղաքական, տնտեսական, սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական կողմերը: Կենսակայունության գործակից: Հասարակական շարժման տեսակները, դրանց սոցիալ-հոգեբանական հատկանիշները, կազմակերպվածության բացակայություն, անդամների միջև թույլ փոխներգործություն, անանունություն (գաղտնիություն): Ռեֆորմատորական (բարենորոգչական) և հեղափոխական շարժումներ: Ազգային-մշակութային միություն, մասնագիտական միություն, մշակութային դաստիարակչական միություն, հիմնադրամներ, օպերատիվ փոխներգործության նպատակով ստեղծված միությունների հոգեբանական վերլուծությունը:

- **Չանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների առանձնահատկությունները**

Չանգվածային հաղորդակցում հասկացությունը: Հաղորդակցման առանձնահատկությունը զանգվածային հաղորդակցման միջոցների կիրառման ժամանակ: Չանգվածային հաղորդակցման գործառույթները սոցիալական եւ սոցիալ-հոգեբանական ոլորտում: Չանգվածային հաղորդակցման արդյունավետությունը: Չանգվածային հաղորդակցման գործընթացի հիմնական բաղադրիչների ուսումնասիրությունը: Կոմունիկատորի և լսարանի հարաբերությունը: Լսարանի

կողմից տեղեկության ընկալման հարցում սոցիալական դիրքորոշումների դերը: Տեղեկություն՝ տրված զանգվածային հաղորդակցման միջոցներով: Հոգեբանական մեխանիզմները, որոնք ապահովում են նյութի ընկալման, հիշողության, ուշադրության ընտրողականությունը և նրա մեկնաբանումները: Զանգվածային հաղորդակցման բովանդակության վերլուծության մեթոդները:

Զանգվածային հաղորդակցման միջոցների քարոզչական ներգործության ուսումնասիրումը և գնահատումը: Գովազդի և քարոզչության ուսումնասիրությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունը:

Սոցիալ-հոգեբանական երևույթների դասակարգումը: Հասարակական կարծիք, հասարակական պատկերացումներ, զանգվածային տրամադրություններ և հասարակական ավանդույթներ: Հասարակական կարծիքի գործառույթները (ֆունկցիաները), վարքի կարգավորման գործառույթ, փաստերի և իրադարձությունների գնահատման արտացոլման գործառույթ: Տարածվածությունը որպես հասարակական կարծիքի զարգացման բնորոշ առանձնահատկություն: Զանգվածային տրամադրությունների դինամիզմի (շարժունության) դրսևորումները: Գաղափար հասարակական դիրքորոշումների մասին:

- **Էթնիկական (ազգային) խմբերի սոցիալ-հոգեբանական էությունը**

Էթնիկական հոգեբանության առարկան, էթնիկական հոգեբանության միջառարկայական բնույթը: Էթնոհոգեբանական գաղափարների զարգացումը Եվրոպայում և ԱՄՆ-ում էթնոհոգեբանական ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները (ռեյաստիվիզմ, արսոլյուտիզմ, ունիվերսալիզմ): Գաղափար ազգային բնավորության և ազգային հոգեբանության վերաբերյալ: Էթնիկական ինքնագիտակցություն և էթնիկական նույնականություն հասկացությունների հարաբերակցությունը: Էթնիկական նույնականության կառուցվածքի հոգեբանական բնութագիրը: Էթնիկական նույնականության բաղադրամասերը, պահանջմունքադրդապատճառային, կոգնիտիվ, աֆեկտիվ և վարքագծային բաղադրամասեր:

Ազգայինը և համամարդկայինը մշակույթում: Սոցիալականացման էթնոմշակութային առանձնահատկությունները: Սոցիալական վարքի կարգավորման էթնիկական յուրատիպությունը: Էթնիկական ստերեոտիպեր:

- **Ամբոխի սոցիալ-հոգեբանական էությունը**

Գաղափար ամբոխի մասին, ամբոխի տեսակները: Ամբոխի սոցիալ- հոգեբանական առանձնահատկությունները, խմբային ներշնչվողականության և ընկալման հուզականության բարձրացում, սեփական արարքների համար պատասխանատվության ճնշում, գաղտնիության և անպատժելիության ուժի գիտակցում: Ամբոխի զարգացման մեխանիզմները: Խոսքը որպես ամբոխի անդամների կողմից հոգեբանական ներգործության հիմնական ձև: Հասարակ, արտահայտչական (էքսպրեսիվ), պայմանական (կոնվենցիոնալ) և գործող ամբոխներ: Խուճապի դրսևորումները, զանգվածային փախուստ և խուճապային տրամադրություններ: Խուճապի առաջացման և զարգացման դինամիկան: Ամբոխի մասնակիցներ. դերային կառուցվածքը: Խմբային էքսցեսների (անկարգությունների) զարգացման փուլերը, իրադրության բարդացում, հակաիրավական գործողությունների առիթի առաջացում և դրանց իրագործում, հետէքսցեսային իրադրություն:

- **Սոցիալական լարվածության և կոնֆլիկտների հոգեբանություն**

Սոցիալական լարվածության պատճառներն ու մեխանիզմները «Սոցիալական լարվածություն» հասկացության վերաբերյալ հիմնական մոտեցումները: Սոցիալական լարվածության մակարդակները: Սոցիալական լարվածության առաջացումը ֆիզիոլոգիական, հոգեֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական դեզադապտացիայի պայմաններում: Սոցիալական լարվածության երկակի բնույթը: Սոցիալական լարվածության դեստրուկտիվ (ապակառուցողական) և կառուցողական դերերը: Սոցիալական լարվածության պատճառականության հիերարխիան: Բարձր սոցիալական լարվածության աղբյուրների դասակարգումը:

- **Սոցիալական լարվածության դրսևորման ձևերը**

Սոցիալական լարվածության դինամիկան և զարգացման մեխանիզմը: Խուճապը արտակարգ իրավիճակներում և նրա դերը սոցիալական լարվածության առաջացման գործում: Սոցիալական լարվածության առաջացումը վթարների հակազդման ժամանակ, հակազդման տեսակները: Սոցիալական լարվածության սոցիալ-տնտեսական պատճառները: Սթրեսի հաղթահարման անհատական առանձնահատկությունները:

- **Կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական բնութագիրը**

Կոնֆլիկտների կառուցվածքը: Կոնֆլիկտի ուսումնասիրության հիմնական ուղղությունները արտասահմանում, սոցիալ-դարվինիզմ, հոգեվերլուծություն, գեշտալտհոգեբանություն, ինտերակցիոնիզմ, մաթեմատիկական մոդելավորում և այլն: Կոնֆլիկտի հիմնական հատկությունները: Կոնֆլիկտային իրավիճակների տեսակները: Կոնֆլիկտի կառուցողական, ապակառուցողական և ախտորոշիչ գործառույթները: Կոնֆլիկտի դինամիկայի փուլերը. մինչևկոնֆլիկտային իրադրություն, կոնֆլիկտային փոխներգործություն և կոնֆլիկտի հարթում: Կոնֆլիկտների հարթման հոգեբանական ուղիները: Բանակցությունները որպես կոնֆլիկտի հաղթահարման միջոց:

- **Սոցիալական լարվածության և կոնֆլիկտների հաղթահարման հոգեբանական ուղիներն ու պայմանները**

Սոցիալական լարվածության հաղթահարման տեխնիկան: Սոցիալական լարվածության հաղթահարման գործընթացի մակարդակները. միկրո և մակրո մակարդակներ: Սոցիալական մտահասությունը որպես սոցիալական լարվածության հաղթահարման միջոց: Ֆրուստրացիայի վիճակում անձի և հասարակության ապակառուցողական վարքագծային դրսևորումները, ագրեսիա, ռեպրեսիա (ճնշում), էսկամպիզմ (պրոբլեմից խուսափում), ռեգրեսիա, ռացիոնալիզացիա, սուբլիմացիա, պրոյեկցիա, աուտիզմ (ներանձնացում): Ապակառուցողական վարքի հաղթահարմանն ուղղված թերապևտիկ համակարգերը: Ձեռնարկությունների հակավթարային կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման պայմանները:

- **Սոցիալական դիրքորոշումներ**

Սոցիալական դիրքորոշման սահմանումը և կառուցվածքը: Սոցիալական դիրքորոշումների տեսակները: Ռասայական դիրքորոշումներ: Կարծիք ու դիրքորոշում: Դրական և բացասական դիրքորոշումներ: Սոցիալական ստերեոտիպեր և նախապաշարմունքներ: Դիրքորոշումները և անձի վճիռները: Սոցիալական դիրքորոշումների չափման մեթոդները: Սոցիալական դիրքորոշումների չափումը ինքնահաշվետվությունների միջոցով: Վարքային չափումներ: Ֆիզիոլոգիական չափումներ: Սոցիալական դիրքորոշումների գործառույթները: Ընդհանուր գործառույթներ: Առանձնահատուկ գործառույթներ: Հարմարման (ադապտացիայի) գործառույթը որպես ինտեգրող գործոն: Դիրքորոշումների ձևավորումը: Դիրքորոշումների ձևավորման ընդհանուր օրինաչափությունները: Դիրքորոշումների ձևավորման մեխանիզմները: Դիրքորոշումների ձևավորումը իմացական հավասարակշռության մեխանիզմի միջոցով:

- **Իմացական աններդաշնակություն, դիրքորոշում և վարք**

Իմացական հետևողականություն և ներդաշնակություն: Ընդհանուր բնութագիրը: Համոզմունքների հետևողականությունը: Դիրքորոշումների հետևողականությունը: Համոզմունքների և դիրքորոշումների միջև առկա համապատասխանությունը: Դիրքորոշումներ և գործողություններ: Ա. Ռ. Լապյերի պարադոքսը: Բ. Դիրքորոշումների տեսակները և մարդու վարքը: Դիրքորոշում և վարք. անհատական տարբերություններ: Ա. Տրամաբանված գործողության տեսությունը: Բ. Ավտոմատացված գործընթացի մոդելը: Գ. Դիրքորոշում և վարք. թվացյալ խզում: Իմացական աններդաշնակություն: Ա. Իմացական աններդաշնակության բնույթը: Բ. Իմացական աններդաշնակության օրինակներ: Լ. Ֆեստինգերի տեսության նախադրյալները նախորդ հեղինակների գործերում: Իմացական աններդաշնակության ծագման պայմանները: Ռելեվանտ և ոչ ռելեվանտ հարաբերություններ: Իմացական միավորները փոխելու դժվարությունը:

- **Կազմակերպչական հոգեբանություն**

Կազմակերպչական հոգեբանությունը հոգեբանական գիտելիքների համակարգում: Կազմակերպությունների հետազոտման ընդհանուր խնդիրները: Կազմակերպությունը որպես բաց սոցիալական համակարգ: Կազմակերպության գործունեության արտաքին և ներքին կազմակերպչական գործոնները: Կազմակերպության անձնակազմը, անձնակազմի կառավարման առանձնահատկությունները: Կոնֆլիկտը կազմակերպությունում: Կոնֆլիկտների կարգավորում և բանակցություններ: Հաղորդակցություն կազմակերպություններում: Գործարար հաղորդակցում. հոգեբանական հիմնախնդիրներ:

- **Կառավարման հոգեբանություն**

Կառավարման հոգեբանության հիմնախնդիրները, մեթոդները: Ուսումնասիրման մեթոդները և դրանց տեսական ու կիրառական նշանակությունը: Գիտական կառավարման հիմնական դպրոցները: Կառավարման հոգեբանության ձևավորման պատմությունը: Կառավարման հոգեբանության էվոլյուցիան՝ «տնտեսական մարդ», «սոցիալական մարդ» հասկացությունները:

Մշակույթ և կառավարում: Արևմտյան և արևելյան կառավարման առանձնահատկություններ: Աշխատակազմի կառավարման և ընտրության հոգեբանական մեթոդներ:

- **Արդյունավետ կառավարման դասական և ժամանակակից տեսությունները**

Առաջնորդի անձնային գծերի տեսություններ: Առաջնորդային վարքի հայեցակարգ: Իրադրական մոտեցում: Ժամանակակից մոտեցումներ՝ ատրիբուտիվ, խարիզմատիկ և նորարարական առաջնորդություն: Առաջնորդ VS Ղեկավար

Արդի հայեցակարգային և տերմինաբանական փոփոխությունները ղեկավարի վերաբերյալ (manager-coach/ղեկավար-մարզիչ): Առաջնորդ, ղեկավար, ղեկավար մարզիչ/coach/, մարզիչ. Թրեյինգ, քուչինգ/:

Կազմակերպությունը ըստ Ադգիզեսի՝ աշխատակիցների տեսակները, կազմակերպության կենսագործունեության ցիկլ:

- **Ղեկավար անձ**

Ղեկավար անձի գործունեության հոգեբանական առանձնահատկությունները՝ ղեկավարի սոցիալ-կենսագրական բնութագիրը, ընդունակություններ, անձնային գծերի առանձնահատկությունները, IQ-EQ-ի հոգեբանական առանձնահատկությունները:

- **Խումբ-կոլեկտիվ**

Կառավարվող խմբի սոցիալ-հոգեբանական հարցերը՝ կոլեկտիվի հիմնական բնութագիրը, բարոյահոգեբանական մթնոլորտը: Կազմակերպական մշակույթ: Խմբեր: Ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր: Խմբային դինամիկա: Սոցիալական ներազդեցություն /գիտափորձեր/:

Կազմակերպական վարք (organizational behaviour):

- **Մոտիվացիայի հոգեբանություն**

Աշխատանքային մոտիվացման գործառույթների հոգեբանական առանձնահատկությունները. ընդհանուր պատկերացում աշխատանքային մոտիվացիայի մասին: Ինքնաարդյունավետության հասկացությունը՝ Բանդուրա: Պատվիրակում: Պատվիրակումը (լիազորությունների փոխանցումը) կառավարման գործողությունների համակարգում: Մոտիվացիա, տեսություններ: Աշխատանքային մոտիվացման գործառույթների հոգեբանական առանձնահատկությունները:

Մոտիվացիայի գործընթացային տեսություններ: Մոտիվացիայի բովանդակային տեսություններ:

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ ՅՈՒ Ն

1. Գասպարյան Ժ., Ս. Գևորգյան xix-xx դարերի և XXI դարասկզբի սոցիոլոգիայի պատմություն, Երևան 2019
2. Հարոյան Ն. «Սոցիալական ներազդման հոգեբանություն», Երևան 2012
3. Նալչաջյան Ա.Ա. «Սոցիալական հոգեբանություն», Երևան 2004
4. Նալչաջյան Ա.Ա. «Անձ, խմբային սոցիալական և հոգեբանական հարմարում», Երևան ՀՀԳ ԱԱ հրատ. 1968
5. Նալչաջյան Ա.Ա. «Ընտանիքի սոցիալական հոգեբանություն», Երևան 1992
6. Նալչաջյան Ա. Ա., «Հոգեբանության հիմունքներ», Երեւան, «Հոգեբան», 1997:
7. Սեդրակյան Ս. « Ընտանիքի հոգեբանություն», Երևան 2010
8. Андреева Г.М. «Социальная психология», Москва 1988 г.
9. Майерс Д. «Социальная психология», Питер 1997 г.
10. Шихирев П. «Современная социальная психология», Москва 2000 г.
11. Узнадзе , Д. Н., Психологические исследования, М., “Наука”, 1966,
12. Аронсон Э., Общественное животное, Введение в социальную психологию , пер. с англ., под. ред. В.С.Мигуна, м. 1998
13. Бахмин В.И., Бергер Я.М., Гениева Е.Ю., Дилигенский Г.Г., Шадриков В.Д., «Введение в практическую социальную психологию», М. 1996
14. Милграм Э. С. «Эксперимент в социальной психологии», СПб 2000
15. Ольшанский Д. В. «Психология масс», СПб 2001
16. Платонов Ю.П. «Социальная психология», Питер 2005
17. Почебут Л.Г., Мейжис И. А. «Социальная психология», Питер 2010
18. Чалдини Роберт «Психология влияния», Бомбора, 2019 г
19. Шибутани Т. «Социальная психология», Ростов на Д./1999
20. Allport G. W., Attitudes, In: The handbook of social psychology, Ed. by C. Murchison; Worcester: Clark Univ. Press, 1935, p. 810.
21. Heider F., The psychology of interpersonal relations, New York, Wiley, 1958.
22. Kay Deaux, Mark Snyder “The Oxford Handbeok of Personality and Social Psychology” Oxford 2018

23. Mc Guire, W. J., The nature of attitudes and attitude change, In: G. Lindzey and E. Aronson (Eds.), Handbook of Social Psychology, 2nd Ed., Vol. 3, Reading (Mass.): Addison-Wesley, 1969.
24. Michael A Hogg, Graham M Vaughan, "Social Psychology 7th Edition" Peashon 2015
25. Osgood C. E., Suci G. J. and Tannenbaum P. H., The measurement of meaning, Univ. of Urbana Press, Urbana, 1957.
26. Robin R. Vallacher "Social Psychology Exploring the Pynamich of Human Experience", 2019
27. Wiener A., Attitudes versus action: The relationship of verbal and overt behavioral responses to attitude objects, "The Journal of Social Issues", 1969, 25, pp. 1–78.
28. Worchel S. a. o., Understanding Social Psychology, 4th Ed., New York a. O., 1988, pp. 271-272

Գրականության ցանկ կառավարման հոգեբանության բաժին

- The Oxford Handbook of Organizational Psychology . Edited by Steve W. J. Kozlowski. New York: [Oxford University Press](#). 2012 (Vol. 1 and 2)
- Organizational Psychology. Edited by: Su Mi Dahlgaard-Park. The SAGE Encyclopedia of Quality and the Service Economy. 2015.
- Anderson, N.; Ones, D. S.; Sinangil, H. K.; Viswesvaran, C. (eds.). (2002). Handbook of Industrial, Work and Organizational Psychology, Volume 1: Personnel Psychology. Thousand Oaks, California: [SAGE Publications](#)
- Rogelberg, S. G. (ed.). (2002). Handbook of Research Methods in Industrial and Organizational Psychology. Malden, Massachusetts: Blackwell.
- Организационная психология. Учебник (под ред. А.Б.Леоновой). М.: ИНФРА-М. 2013.
- Занковский А.Н. Организационная психология. М.: Флинта. МПСИ. 2002.
- Кирхлер Э., Майер-Прести К., Хофманн Е. Психологические теории организаций. Серия «Психология труда и организационная психология», выпуск 5. Харьков: Изд-во «Гуманитарный Центр». 2005.

- Мандель Б. Р. Современная организационная психология. Модульный курс : учебное пособие для обучающихся в гуманитарных вузах (бакалавры, магистры). Москва, Берлин: [Директ-Медиа](#), 2016
- **Սահակյան Մ.** Կառավարման հոգեբանության մի քանի հարցեր/ Ուս. ձեռնարկ: Հեղինակային հրատ., 2015թ., 140 էջ// <http://ysu.am/files/dzernark.pdf>
- **Հարությունյան Գ.** Լիդերության հիմնական հոգեբանական դպրոցներն ու տիպաբանությունները Ուսումնական ձեռնարկ, Երևան 2012 92էջ.
- Անձր և պաշտոնը, մասնագիտական խմբագիր Մ. Պետրոսյան, Ա. Զավադյան, Դ. Ամիրյան. Երևան 2013,344էջ.
- **Լոքյան Ա. Բ.,** Հանրային ծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Եր., 2015, 240 էջ:
- **Աղուզումցյան Ռ., Պետրոսյան Լ., Պողոսյան Ս., Խաչատրյան Ա.,** Կառավարչական գործունեության առանձնահատկությունների հոգեբանական նկարագիր, ՀՀ ՊԿԱ, Եր., 2015, 232 էջ:
- **Աղուզումցյան Ռ., Պետրոսյան Լ., Պողոսյան Ս., Խաչատրյան Ա.,** Կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, Կոլեկտիվ մենագրություն, Եր., 2016, 208 էջ:
- **Բաբոյան Ա.,** Կոնֆլիկտների կարգավորում և բանակցություններ, Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2004
- **Պետրոսյան Լ.,** Անձի մասնագիտական գործունեության հոգեբանական օրինաչափությունները /Լ. Հ. Պետրոսյան - Եր.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2016.- 256 էջ:
- **Райгородский Д.Я.** Психология руководства. Уч.пособ.,Самара: Изд. Дом "Бархар-М", 2005
- **Райгородский Д.Я.** Психология управления. Уч.пособ.,Самара: Изд. Дом "Бархар-М", 2005
- **Статт Д.,** Психология и менеджмента;М.; 2003
- **Mayers D. G.,** Social Psychology. Mcgraw-Hill College; 1992, P. 704 pages

- **Vecchio Robert;** Orgnizational behavior; Sout-western/CENGAGE Learning, 2006, pg. 432